4ն Դեկտեմբերի 1886 ամի

Ողեհափառ Հայրապետն ազգիս իտօնի Սրբոց Հարցն Եղիպտացւոց իւր անուանակոչութեան տօնի առիթով ստացած լինելով բազմաթիւ, զեղուն զգացմամբ շնորհաւորական հեռագրեր հոգևորական բարձրաստիճան պաշտօնեաներից, ժողովրդոց ներկայացուցիչներից, Հոգև. դպրոցաց հոգաբարձութիւններից, հոգևորական և աշխարհական մասնաւոր անձինքներից, զգածուած այն որդիական ջերմ սիրոփն, որ արտայայտուած է շնորհաւորական հեռագրերում, բարեհաճեց իւր հայրապետական օրհնութիւնը լիաշուրթն շնորհակալեաց հետ «Արարատայ» միջոցաւ յայտնել բոլորին։ Աղօթելով առ Աստուած անսասան պահել հայ ազգը և եկեղեցին ցկատարած աշխարհի և ամրապնդել բարոյական կապը, որ կայ ընդ մէջ հայ ժողովրդեան և Հայրապետական Աթոռոյ։